Հավելված 6
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-20/107»* ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2020Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ I, IV, VII ԳՈՏԻՆԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ և ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-20/107-1»

ք. Վանաձոր «01» 10 2020թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԿՈՎԱՆ»ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մնացականյան-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի 1-ին, 4-րդ և 7-րդ գոտիների փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4:[17]

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

[17] *Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:*

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 22221955 (քսաներկու միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար ինը հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ::[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

---

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 [23]

7.7 [24]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 [25]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	**« ԷԿՈՎԱՆ » ՍՊԸ**
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	**ք.Վանաձոր, Մաշտոցի փողոց շ.108/45**
Կենտրոնական գանձապետարան	**«Էվոկաբանկ» ՓԲԸ**
ՀՀ 900232545021	**ՀՀ 1660013384650100**
ՀՎՀՀ 06901936	**ՀՎՀՀ 06955278**
----------Մ.Ասլանյան	**---------- Մ. Մնացականյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[25] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
«01» 10 2020 թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-20/107-1»ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը		հասցեն	ժամկետը**
1	90511100/17	չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի 1-ին գոտու փողոցների սանիտարական մարքման և կենցաղային աղբահանության ծառայություններ -տես ներքևում	դրամ	11618225	1		Տես ներքևում	01.10.2020թ.-31,12.2020թ.
4	90511100/20	չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի 4-րդ գոտու փողոցների սանիտարական մարքման և կենցաղային աղբահանության ծառայություններ -տես ներքևում	դրամ	6052783	1		Տես ներքևում	01.10.2020թ.-31,12.2020թ.
7	90511100/23	չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի 7-րդ գոտու փողոցների սանիտարական մարքման և կենցաղային աղբահանության ծառայություններ -տես ներքևում	դրամ	4550947	1		Տես ներքևում	01.10.2020թ.-31,12.2020թ.

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

I գոտու համար

Անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի I գոտու՝ Թագավորանիստ, Ուսանողական թաղամասերի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Ամենօրյա մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 8[30]-ին: Փողոցների, մայթերի ու հրապարակների ամառային մաքրման ժամանակ կատարողը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, կատարողը նախ և առաջ պետք է մաքրի փողոցը կամ հրապարակը:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո կատարողը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից կատարողը աղբը և փոշին պետք է մաքրի ավելու միջոցով՝ օգտագործելով նաև զոգաթիակ:

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա համապատասխան մեքենայով տեղափոխվի մոտակա արտոնագրված աղբաթափման վայր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:

Կենցաղային աղբահանությանը և սանիտարական մաքրումը պետք է ապահովվի ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Պետք է իրականացվի գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման, փողոցների, տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ, աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են ամենօրյա, ձեռքի և մեքենայացված եղանակով:

Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից տարածքը: Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա դատարկելուց թափված աղբը և հարակից տարածքը մաքրել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Վանաձոր համայնքի I գոտու տարածքում տեղադրված աղբարկղերից աղբը հեռացնել ամենօրյա հաճախականությամբ, իսկ մասնավոր հատվածում աղբահանությունն իրականացնել շրջիկ երթերի միջոցով, շաբաթը երկու անգամ: Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբամուղերը սպասարկել մինչև +5 C0-ի դեպքում առնվազն երեք օրը մեկ անգամ, +5 C0-ից ավել ջերմաստիճանի առկայության դեպքում ամեն օր: Աղբամուղի տարածքն ավելել և մաքրել: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել աղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: Աղբահանությունը անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ նախապես համաձայնեցված գրաֆիկով:

I գոտու փաստացի մաքրվող մակերեսը մեկ օրվա համար 41685 մ^2 է: Մաքրվող տարածքից մինչև մոտակա արտոնագրված աղբաթափման վայր և հետադարձի երկարությունը կազմում է 40 կմ: Կենցաղային աղբի կուտակման քանակը 2020 թվականի չորրորդ եռամսյակի համար 1-ին գոտում կանխատեսվում է 1240.990 տն :

Վանաձոր համայնքի I գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցելու համար անհրաժեշտ է 2 հատ ինքնաթափ-բեռնատարողությունը՝ առնվազն 5տն, և 2 հատ հատուկ կահավորված բարձող մեքենա ԿՕ-բեռնատարողությունը՝ 8մ^3 կամ ավելի, 4 հոգի վարորդ/ վարորդական իրավունքի վկայական B,C կարգ, առնվազն 3 տարվա աշխ.ստաժ/, 4 հոգի բարձող բանվոր և 5 հոգի մաքրող բանվոր:

Կից ներկայացվում է Վանաձոր քաղաքի I գոտու սանիտարական մաքրման փողոցների ցանկը, ինչպես նաև կենցաղային աղբահանության իրականացման ցանկն ըստ փողոցների, աղբարկղերի տեղերի և աղբամուղերի:

Վանաձոր քաղաքի I գոտու փողոցների սանիտարական մաքրում

N	Փողոցների անվանումը	Փողոցի երկարությունը	Փողոցի լայնությունը	Փողոցի մաքրվող երկարությունը	Փողոցի մաքրվող լայնությունը	Մաքրվող մակերեսը բ/մ օր
1.	Հալաբյան	900	11	900	8	7200
2.	Աղայան	2000	15	1100	8	8800
3.	Ինֆեկցիոն հիվանդանոց տանող ճանապարհ	800	6	400	5	2000
4.	Ներսիսյան	1200	14	1200	6	7200
5.	Իսահակյան	900	6	452	4	1808
6.	Ս. Պետերբուրգի	3500	14.3	1214	7	8497
7.	Ուսանողական	800	14	400	6	2400
8.	Շինարարների	650	9	430	6	2580

9.	Քոչինյան հրապարակ						1200
	Ընդամենը՝						41 685

Վանաձոր քաղաքի I գոտ ու թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց

h/h	Փողոցի անվանումը	Աղբարկղերի քանակը /հատ/	Մաքրման հաճախա կանությունը	Բազմաբնակարան շենքերի հասցեներ	Աղբամ ուղերի քանակ	Մաքրման հաճախականո ւթյուն
1.	***Հալաբյան փողոց***					
	▪ «Մալյուտ» մանկական սրճարան	2	ամենօրյա	Դիմաց ե թաղ.1	1	Երեք օրը մեկ
	▪ Բենզալցակայանից վերև	2	ամենօրյա	Դիմաց Ե թաղ-2	1	Երեք օրը մեկ
2	***Աղայան փողոց***					
	▪			Աղայան 59/1	1	Երեք օրը մեկ
	▪ Թիվ 84,85,91,75ա,61շեքների հարևանությամբ	9	ամենօրյա	Աղայան 59/2	1	Երեք օրը մեկ
	▪ Մարզադպրոցի մոտ	4	ամենօրյա	Աղայան 59/3	1	Երեք օրը մեկ
	▪ այգու դիմաց՝ բենզալացակայանի մոտ	3	ամենօրյա	Աղայան 59/4	1	Երեք օրը մեկ
	▪ Նախկին Կինո«Գուգարքի»մոտ	4	ամենօրյա	Աղայան 74/1	1	Երեք օրը մեկ
	▪ Երաժշտական դպրոցի մոտ	3		Աղայան 74/2	1	
	▪ Թիվ 3 հիվանդանոցի տարածք	5	ամենօրյա	Աղայան 74/3	1	Երեք օրը մեկ
3	***Ներսիսյան փողոց***			Աղայան75ա	2	Երեք օրը մեկ
	▪ Այգու ներքևի մաս	4	ամենօրյա	Աղայան 94	2	Երեք օրը մեկ
	▪ Թիվ 24 դպրոցի մոտ	2	ամենօրյա	Աղայան 96/1	2	Երեք օրը մեկ
	▪ նրբ. թիվ 7, 4,1,6 շենքեր /քարքարոտ/	8	ամենօրյա	Աղայան 98	1	Երեք օրը մեկ
4	***Իսահակյան փողոց***		ամենօրյա	Ներսիսյան նրբ.10	1	Երեք օրը մեկ
	▪ 1,13,17,20,9,19 շենքերի մոտ	13	ամենօրյա	Ներսիսյան նրբ.12	1	Երեք օրը մեկ
	▪ Իսահակյան 1-ին նրբ.11,9 շենքերի մոտ	2	ամենօրյա	Ներսիսյան նրբ.14	1	Երեք օրը մեկ
	▪ Ավետարանչական եկեղեցու հարևանությամբ	3	ամենօրյա	Ներսիսյան նրբ-16	1	Երեք օրը մեկ
	▪ Եկեղեցու բակում	1	ամենօրյա	Ներսիսյան նրբ.18	1	Երեք օրը մեկ
5	***Սանկտ-Պետերբուրգի փողոց***		ամենօրյա	Իսահակյան 2	1	Երեք օրը մեկ
	▪ Բենզալցակայանի հարևանությամբ	4	ամենօրյա	Իսահակյան4	1	Երեք օրը մեկ
	▪ Մանկտ Պետերբուրգ 3 շենք	2	ամենօրյա	Ուսանողական 4	1	Երեք օրը մեկ
	▪ Սեզամի շենքի դիմաց	3	ամենօրյա	Ուսանողական5	4	Երեք օրը մեկ
	▪ Ս. Պետերբուրգ-Ներսիսյան խաչմերուկ	4	ամենօրյա	Ուսանողական 6	1	Երեք օրը մեկ
	▪ Թիվ 4,5/1,5/4 շենքերի մոտ	6	ամենօրյա	Ուսանողական 8	1	Երեք օրը մեկ
	▪ Կամրջի տակ	4	ամենօրյա	Ուսանողական 10	1	Երեք օրը մեկ
	տնակային ավանի սկզբնամաս	1	ամենօրյա	Ուսանողական 16ա	1	Երեք օրը մեկ
6	***Կնունյանց փողոց***	5	ամենօրյա	ՈՒսանողական 16	1	Երեք օրը մեկ
7	***Մաշտոցի փողոց***		ամենօրյա			
	▪ Շինարարների 10 շենք	3	ամենօրյա			
	▪ 8-րդ դպրոցի հարևանությամբ	3	ամենօրյա			
8	***Ուսանողական փողոց***		ամենօրյա			Երեք օրը մեկ
	▪ թիվ 6 շենքի դիմաց, փոստի մոտ	4	ամենօրյա			Երեք օրը մեկ
9	***Շինարարների փողոց***		ամենօրյա			Երեք օրը մեկ
	▪ 5/2,19,21 շենքերի մոտ	4	ամենօրյա			Երեք օրը մեկ
	▪ Թիվ 30 մանկապարտեզի մոտ	3	ամենօրյա			Երեք օրը մեկ
	▪ Պոլիտեխնիկական ինստիտուտի մոտ	2	ամենօրյա			Երեք օրը մեկ

	▪ Շինարարական քոլեջ	2	ամենօրյա			Երեք օրը մեկ
	▪ Զինկոմիսարիատ	2	ամենօրյա			Երեք օրը մեկ
	▪ <<Բազում>> տառերի մոտ	3				
	▪	120			33	

Վանաձոր քաղաքի I գոտ ու թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց /շրջիկ/

h/h	Փողոցի անվանումը	Մաքրման հաճախականությունը
	Կոմիտաս	շաբաթը երկու անգամ
	Աղայան	շաբաթը երկու անգամ
	Ավետիսյան	շաբաթը երկու անգամ
	Պ. Սևակ	շաբաթը երկու անգամ
	Նիզամի	շաբաթը երկու անգամ
	Վ. Սարոյան	շաբաթը երկու անգամ
	Ն. Մառ	շաբաթը երկու անգամ
	Գ. Էմին	շաբաթը երկու անգամ
	Մանուշյան	շաբաթը երկու անգամ
	Չերնիշևսկի	շաբաթը երկու անգամ
	Կնունյանց	շաբաթը երկու անգամ
	Չապաևի	շաբաթը երկու անգամ
	Ստեփանյան	շաբաթը երկու անգամ
	Իսակովի	շաբաթը երկու անգամ
	Մաշտոցի 1-ին, 2-րդ, 3-րդ նրբ.	շաբաթը երկու անգամ
	Աճառյան	շաբաթը երկու անգամ
	Ճավճավածե	շաբաթը երկու անգամ
	Կապյան	շաբաթը երկու անգամ
	Մարտի 8-ի	շաբաթը երկու անգամ
	Աղյուսագործների	շաբաթը երկու անգամ
	Ռաֆֆու	շաբաթը երկու անգամ
	Մարոյան նրբ	շաբաթը երկու անգամ
	Մտեփանյան	շաբաթը երկու անգամ
	Նարդոսի 3 նրբ	շաբաթը երկու անգամ
	Նարդոսի 2 նրբ	շաբաթը երկու անգամ
	Մաշտոց	շաբաթը երկու անգամ
	Սունդուկյան	շաբաթը երկու անգամ
	Նար-Դոս	շաբաթը երկու անգամ

IV գոտու համար

Անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի IV գոտու՝ Վանաձոր թաղամասի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Ամենօրյա մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 8³⁰-ին: Փողոցների, մայթերի ու հրապարակների ամառային մաքրման ժամանակ կատարողը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, կատարողը նախ և առաջ պետք է մաքրի փողոցը կամ հրապարակը:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո կատարողը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից կատարողը աղբը և փոշին պետք է մաքրի ավլելու միջոցով՝ օգտագործելով նաև զոգաթիակ:

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա համապատասխան մեքենայով տեղափոխվի մոտակա արտոնագրված աղբաթափման վայր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:

Կենցաղային աղբահանությանը և սանիտարական մաքրումը պետք է ապահովվի ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Պետք է իրականացվի գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման, փողոցների տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ, աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են ամենօրյա, ձեռքի և մեքենայացված եղանակով:

Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից տարածքը: Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա դատարկելուց թափված աղբը և հարակից տարածքը մաքրել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Վանաձոր համայնքի IV գոտու տարածքում տեղադրված աղբարկղերից աղբը հեռացնել ամենօրյա հաճախականությամբ, իսկ մասնավոր հատվածում աղբահանությունն իրականացնել շրջիկ երթերի միջոցով, շաբաթը երկու անգամ: Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբամուղերը սպասարկել մինչև +5 C0-ի դեպքում առնվազն երեք օրը մեկ անգամ, +5 C0-ից ավել ջերմաստիճանի առկայության դեպքում ամեն օր: Աղբամուղի տարածքն ավլել և մաքրել: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել աղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: Աղբահանությունը անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ նախապես համաձայնեցված գրաֆիկով:

IV գոտու փաստացի մաքրվող մակերեսը մեկ օրվա՝ 33328 քմ: Մաքրվող տարածքից մինչև մոտակա արտոնագրված աղբաթափման վայր և հետադարձի երկարությունը կազմում է 35 կմ: Կենցաղային աղբի կուտակման քանակը 2020 թվականի չորրորդ եռամսյակի համար IV գոտում կանխատեսվում է 637.429 տն:

Վանաձոր համայնքի IV գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցելու համար անհրաժեշտ է 2 հատ ինքնաթափ-բեռնատարողությունը՝ առնվազն 5տն և 1 հատ հատուկ կահավորված բարձող մեքենա ԿՕ-բեռնատարողությունը՝ 8մ³ կամ ավելի, 3 հոգի վարորդ /վարորդական իրավունքի վկայական B,C կարգ, առնվազն 3 տարվա աշխ.ստաժ/, 3 հոգի բարձող բանվոր և 3 հոգի մաքրող բանվոր:

Կից ներկայացվում է Վանաձոր քաղաքի IV գոտու սանիտարական մաքրման փողոցների ցանկը, ինչպես նաև կենցաղային աղբահանության իրականացման ցանկն ըստ փողոցների, աղբարկղերի տեղերի և աղբամուղերի:

Վանաձոր քաղաքի IV գոտու փողոցների սանիտարական մաքրում

N	Փողոցների անվանումը	Փողոցի երկարությունը	Փողոցի լայնությունը	Փողոցի մաքրվող երկարությունը	Փողոցի մաքրվող լայնությունը	Մաքրվող մակերեսը բ/մ օր
1.	Մյասնիկյան	1380	14	678.5	8	5428
2.	Հերացու	400	7	300	4	1200
3.	Նժդեհ	1250	10	650	4	2600
4.	Զորյան	400	8.8	400	6	2400
5.	Բանակի	900	9	900	7	6300
6.	Աբովյան	1500	11	1000	10	10000
7.	Զաքարյան	600/300	9/6	900	6	5400
	Ընդամենը՝					33328

Վանաձոր քաղաքի բաղամասերից կենցաղայաին աղբահանության իրկանացման ժամանակացույց

IV գոտի

հ/հ	Փողոցի անվանումը	Աղբարկղերի քանակը /հատ/	Մաքրման հաճախականությունը	Բազմաբնակարան շենքերի հասցեներ	Աղբամուղների քանակ	Մաքրման հաճախականությունը
1	***Տպագրիչների փողոց***					
	▪ Տպագրիչներ-Նժդեհ հատման մաս	4	ամենօրյա			
2	***Զորյան փողոց***		ամենօրյա			
	▪ զորամասի տարածք	2	ամենօրյա			
3	***Բանակի փողոց***		ամենօրյա			
	▪ Նախկին բժշկական կենտրոն	6	ամենօրյա	Աբովյան 1	1	երեք օրը

						մեկ
4	***Աբովյան փողոց***		ամենօրյա	Աբովյան 1ա	1	երեք օրը մեկ
	▪ Այգու մոտ	6	ամենօրյա	Զորյան փողոց	5	երեք օրը մեկ
	▪ Արմենիա առողջարան	4	ամենօրյա			երեք օրը մեկ
	▪ տուրբազայի մոտ	4	ամենօրյա			
	▪ Սուրբ Սարգիսեկեղեցու հարակից տարածք	4	ամենօրյա			երեք օրը մեկ
5	***Ֆիդայիների փողոց***		ամենօրյա			
	▪ Բուսաբանական այգու մոտ	2	ամենօրյա			
	▪ Թիվ 107 տան մոտ	2	ամենօրյա			
6	***Մյասնիկյան փողոց***		ամենօրյա			
	▪ 40 ամյակի հուշարձանի տարածք	3	ամենօրյա			
7	***Վարդանանց փողոց***		ամենօրյա			
	▪ Նախկին տաքացուցիչների գործարանի առաջ (118շ)	4	ամենօրյա	Վարդանանց 82	4	երեք օրը մեկ
	▪ Թիվ 35,45,12,32,51 շենքերի մոտ	12	ամենօրյա	Վարդանանց 84	4	երեք օրը մեկ
	▪ Գեղագիտական կենտրոնի տարածք	4	ամենօրյա	Վարդանանց 86	4	երեք օրը մեկ
	84,86 շենքերի բակ	2				
	Արմինֆոի հետնամաս	3				
	Զաքարյան փողոց (ատամնաբուժարան)	3				
		66			19	

Վանաձոր քաղաքի IV գոտու թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց/շրջիկ/

		Մաքրման հաճախականությունը
	Մասնավոր սեկտոր	
	▪ Աբովյան	շաբաթը երկու անգամ
	▪ Զաքարյան	շաբաթը երկու անգամ
	▪ Զորյան	շաբաթը երկու անգամ
	▪ Մյասնիկյան	շաբաթը երկու անգամ
	▪ Բուսաբանական	շաբաթը երկու անգամ
	▪ Լալվար	շաբաթը երկու անգամ
	▪ Աղաբաբյան	շաբաթը երկու անգամ
	▪ Աղաբաբյան նրբ.	շաբաթը երկու անգամ
	▪ Լոռի	շաբաթը երկու անգամ
	▪ Տաթև	շաբաթը երկու անգամ
	▪ Կիլիկիա	շաբաթը երկու անգամ
	▪ Կարբիշև	շաբաթը երկու անգամ
	▪ Օլբելի	շաբաթը երկու անգամ
	▪ Բանակի	շաբաթը երկու անգամ
	▪ Միչուրինի	շաբաթը երկու անգամ
	▪ Նժդեհ	շաբաթը երկու անգամ
	▪ Ֆիդայիներ	շաբաթը երկու անգամ

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ
VII գոտու համար

Անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի VII գոտու՝ Համբարձումյան փողոցի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Ամենօրյա մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 8^{30}-ին: Փողոցների, մայթերի ու հրապարակների ամառային մաքրման ժամանակ կատարողը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, կատարողը նախ և առաջ պետք է մաքրի փողոցը կամ հրապարակը:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո կատարողը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից կատարողը աղբը և փոշին պետք է մաքրի ավելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ:

N	Փողոցների անվանումը	Փողոցի երկարությունը	Փողոցի լայնությունը	Փողոցի մաքրվող երկարությունը	Փողոցի մաքրվող լայնությունը	Մաքրվող մակերեսը բ/մ օր
1.	Համբարձումյան	900	10.5	900	8	7200
	Ընդամենը՝					7200

Մաքրված աղբը և փոշին կույտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկույտային հեռավորությամբ, և ապա համապատասխան մեքենայով տեղափոխվի մոտակա արտոնագրված աղբաթափման վայր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:

Կենցաղային աղբահանությանը և սանիտարական մաքրումը պետք է ապահովվի ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Պետք է իրականացվի գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման, փողոցների տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ, աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են ամենօրյա, ձեռքի և մեքենայացված եղանակով:

Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից տարածքը: Աղբահանության ծառայություններն իրականացնելու ժամանակ աղբարկղը աղբատար մեքենա դատարկելուց թափված աղբը և հարակից տարածքը մաքրել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Վանաձոր համայնքի VII գոտու տարածքում տեղադրված աղբարկղերից աղբը հեռացնել ամենօրյա հաճախականությամբ, իսկ մասնավոր հատվածում աղբահանությունն իրականացնել շրջիկ երթերի միջոցով, շաբաթը երկու անգամ: Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբամուղերը սպասարկել մինչև +5 C0-ի դեպքում առնվազն երեք օրը մեկ անգամ, +5 C0-ից ավել ջերմաստիճանի առկայության դեպքում ամեն օր: Աղբամուղի տարածքն ավլել և մաքրել: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել ախտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: Աղբահանությունը անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ նախապես համաձայնեցված գրաֆիկով:

VII գոտու փաստացի մաքրվող մակերեսը մեկ օրվա համար՝ 7200 քմ: Մաքրվող տարածքից մինչև մոտակա արտոնագրված աղբաթափման վայր և հատադարձի երկարությունը կազմում է 40 կմ: Կենցաղային աղբի կուտակման քանակը 2020 թվականի չորրորդ եռամսյակի համար VII գոտում կանխատեսվում է 534.560 տն:

Վանաձոր համայնքի VII գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցելու համար անհրաժեշտ է 1 հատ ինքնաթափ-բեռնատարողությունը՝ առնվազն 5տն, և 1 հատ հատուկ կահավորված բարձող մեքենա ԿՕ-բեռնատարողությունը՝ 8մ³ կամ ավելի, 2 հոգի վարորդ/ վարորդական իրավունքի վկայական B,C կարգ, առնվազն 3 տարվա աշխ.ստաժ/, 2 հոգի բարձող բանվոր և 3 հոգի մաքրող բանվոր:

Կից ներկայացվում է Վանաձոր քաղաքի VII գոտու սանիտարական մաքրման ենթակա փողոցը, ինչպես նաև կենցաղային աղբահանության իրականացման ցանկն ըստ փողոցների, աղբարկղերի տեղերի և աղբամուղերի:

Վանաձոր քաղաքի VII գոտու փողոցների սանիտարական մաքրում

Վանաձոր քաղաքի VII գոտու
թաղամասերից կենցաղային աղբահանության իրականացման ժամանակացույց

Փողոցի անվանումը	Աղբարկղ քանակը /հատ/	Մաքրման հաճախականությունը	Բազմաբնակարան շենքերի հասցեներ	Աղբամուղների քանակ	Մաքրման հաճախականությունը
Վ. Համբարձումյան փողոց		ամենօրյա			
▪ Դեղատան մոտ	2	ամենօրյա			
▪ Նախկին լուսատեխնիկական գործարանի հանրակացարանի մոտ	4	ամենօրյա			
▪ Թիվ 25 դպրոցի մոտ (դաշտում)	3	ամենօրյա			

▪ Թիվ 13,14 շենքերին կից	4	ամենօրյա	Գրիբոյեդով 4	4	Երեք օրը մեկ
			Համբարձումյան 8	2	
			Համբարձումյան 11	2	
			Համբարձումյան 12	3	
			Համբարձումյան 16	1	
			Համբարձումյան 18	1	
Գրիբոյեդով		ամենօրյա	Չերկասի 15	1	Երեք օրը մեկ
▪ Ոստիկանության շենքի հարևանությամբ	3	ամենօրյա	Չերկասի 4	4	Երեք օրը մեկ
Ռուսթավի փողոց 1,5,շենքերի մոտ	4	ամենօրյա	Չերկասի 5	1	Երեք օրը մեկ
Սուխումի փողոց	3	ամենօրյա	Չերկասի 7	1	Երեք օրը մեկ
▪ Թիվ 10, 2 շենքերին կից	5	ամենօրյա	Սուխումի 4	1	
▪ Ոստիկանության շենքի վերև	3		Սուխումի 12	3	
Բուլդարական տնականեր	4	ամենօրյա	Ռուսթավի 8	1	Երեք օրը մեկ
		ամենօրյա	Ռուսթավի 9	1	Երեք օրը մեկ
▪			Ռուսթավի 10	1	Երեք օրը մեկ
▪			Ռուսթավի 12	1	Երեք օրը մեկ
▪			Ռուսթավի 14	1	Երեք օրը մեկ
Ընդամենը՝	34			29	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/հ900232545021
ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
« ԷԿՈՎԱՆ » ՍՊԸ
ք.Վանաձոր, Մաշտոցի փողոց շ.108/45
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1660013384650100
ՀՎՀՀ 06955278

----------Մ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1.1
«01» 10 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-20/107-1»ծածկագրով պայմանագրի

Չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի I գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցում

կենցաղային աղբահանություն						
Հ/հ	գոտին	1 երթի երկ. և տեղափ. գոտու ներսում	չափման միավորը	ծավալը	միավորի գինը /դրամ/ առանց շահույթի և ԱԱՀ	արժեքը / դրամ/
1	2	3	4	5	6	7
	I գոտի, Թագա -վորանիստ, Ուսանողական , Դիմաց թաղամասեր	40	տն	1240.990	7158	8883006
	Ընդամենը					8883006
	Շահույթ 11%					977130,7
	Ընդամենը					**9860136,7**

Սանիտարական մաքրում				
	չափման միավորը	մաքրվող մակերես ք.մ. /օր	միավորի արժեքը 1 ք.մ. -ի համար /առանց շահույթի և ԱԱՀ-ի/	արժեքը 92 օրվա համար /դրամ/
1	2	3	4	5
I գոտի, Թագա - վորանիստ, Ուսանողական , Դիմաց թաղամասեր	$մ^2$	41685	0,413	1583863,3
Ընդամենը				1583863,3
Շահույթ 11%				174225
Ընդամենը				**1758088,3**
կենցաղային աղբ+սանիտարական մաքրում ընդհանուր				**11618225**

Չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի IV գոտու փողոցների սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայությունների մատուցում

կենցաղային աղբահանություն						
Հ/հ	գոտին	1 երթի երկ. և տեղափ. գոտու ներսում	չափման միավորը	ծավալը	միավորի գինը/ դրամ/ առանց շահույթի և ԱԱՀ	արժեքը / դրամ/
1	2	3	4	5	6	7
	IV գոտի Վանաձոր թաղամաս	35	տն	637.428	6568	4186627,1
	Ընդամենը					4186627.1
	Շահույթ 11%					460529
	Ընդամենը					**4647156,1**

Սանիտարական մաքրում				
	չափման միավորը	մաքրվող մակերես ք.մ. /օր	միավորի արժեքը 1 ք.մ. -ի համար	արժեքը 92 օրվա

			/առանց շահույթի և ԱԱՀ-ի/	համար / դրամ/
1	2	3	4	5
IV գոտի Վանաձոր թաղամաս	մ^2	33328	0,413	1266330,7
Ընդամենը				1266330,7
Շահույթ 11%				139296,4
Ընդամենը				**1405627,1**
կենցաղային աղբ+սանիտարական մաքրում ընդհանուր				**6052783**

Չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի VII գոտու կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման

կենցաղային աղբահանություն						
Հ/հ	գոտին	1 երթի երկ. և տեղափ. գոտու ներսում/կմ/	չափման միավորը	ծավալը	միավորի գինը/ դրամ/ առանց շահույթի և ԱԱՀ	արժեքը / դրամ/
1	2	3	4	5	6	7
	VII գոտի Բազում թաղամաս	40	տն	534.560	7158	3826380,5
	Ընդամենը					3826380,5
	Շահույթ 11%					420901,9
	Ընդամենը					**4247282,4**

Սանիտարական մաքրում				
	չափման միավորը	մաքրվող մակերես քմ /օր	միավորի արժեքը / դ.մ. -ի համար /առանց շահույթի և ԱԱՀ-ի/	Ընդամենը արժեքը 92 օրվա համար / դրամ/
1	2	3	4	5
VII գոտի Բազում թաղամաս Համբարձումյան փողոց	մ^2	7200	0,413	273571,2
Ընդամենը				273571,2
Շահույթ 11%				30092,8
Ընդամենը				**303664**
կենցաղային աղբ+սանիտարական մաքրում ընդհանուր				**4550946,4**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900232545021
ՀՎՀՀ 06901936

----------Մ. Ասլանյան
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
« ԷԿՈՎԱՆ » ՍՊԸ
ք.Վանաձոր, Մաշտոցի փողոց շ.108/45
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1660013384650100
ՀՎՀՀ 06955278

----------Մ. Մնացականյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված N 2
«01» 10 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀՇՁԲ-20/107-1»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	90511100/17	չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի 1-ին գոտու փողոցների սանիտարական մարքման և կենցաղային աղբահանության ծառայություններ										3834000	7668000	11618225	**11618225**
4	90511100/20	չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի 4-րդ գոտու փողոցների սանիտարական մարքման և կենցաղային աղբահանության ծառայություններ										1997400	3994800	6052783	**6052783**
7	90511100/23	չորրորդ եռամսյակի համար Վանաձոր համայնքի 7-րդ գոտու փողոցների սանիտարական մարքման և կենցաղային աղբահանության ծառայություններ										1501800	3003600	4550947	**4550947**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախապատվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական օրենսդրապետարան
ՀՀ 900232545021
ՀՎՀՀ 06901936

_____ Մ.Ասլանյան
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
« ԷԿՈՎԱՆ » ՍՊԸ
ք.Վանաձոր, Մաշտոցի փողոց 2.108/45
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1660013384650100
ՀՎՀՀ 06955278

_____ Մ. Մնացականյան
/ստորագրություն/Կ.Տ

Հավելված 3
« 01 » 10 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀՇՁԲ-20/107-1»ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«01» 10 2020թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-20/107-1»ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն